ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Արաբական Միացյալ Էմիրություններ գործուղման արդյունքների մասին

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Դավիթ Խուդաթյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի)

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Հրավերը ստացվել է ԱՄԷ էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար Սուհեյլ Մոհամմադ Ալ Մազրուեյից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

   Համաշխարհային երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքների ցուցահանդեսին և համաժողովին մասնակցություն:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Քննարկվել է ՀՀ-ԱՄԷ ենթակառուցվածքային համագործակցության ողջ պորտֆելը հետևյալ շեշտադրումներով՝

- Արևային կուտակիչ կայանների կառուցման հարցում ԱՄԷ առաջատար փորձն ուսումնասիրելու և կիրառելու հետ կապված հարցեր,
- Ջրային ենթակառուցվածքների արդիականացման, առաջադեմ տեխնոլոգիաների ներդրման, ջրային ոլորտի խնդիրներին ուղղված ԱՄԷ փորձի ուսումնասիրման և տեղայնացման հետ կապված թեմաներ,
- Ավիացիոն հաղորդակցության առկա վիճակը, կանոնավոր ուղիղ չվերթերի հաճախությունն ավելացնելու, ինչպես նաև ԱՄԷ թռիչքային անվտանգության սև ցուցակից Հայաստանի դուրս գալու հետ կապված առաջարկները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Երկկողմ ձևաչափով հանդիպում է տեղի ունեցել ԱՄԷ էներգետիկայի և ենթակառուցվածքների նախարար Սուհեյլ Մուհամմադ Ալ Մազրուեյի հետ: Երկուստեք ընդգծվել է հայ-էմիրաթական զարգացող հարաբերությունները և ընդլայնվող տնտեսական հարաբերությունների օրակարգում ենթակառուցվածքային ոլորտում գործընկերության խորացման կարևորությունը: ԱՄԷ նախարարը նշել է, որ Հայաստանն ԱՄԷ-ի համար բարեկամ երկիր է, որի հետ համագործակցության խորացման լայն հնարավորություններ կան: Առանձնահատուկ կարևորվել է Հայաստանում արևային կուտակիչ կայանների կառուցման հարցը, որի հետ կապված ԱՄԷ առաջանցիկ փորձը կարող է օգտակար լինել: Նախարար Ալ Մազրուեյի հանձնարարությամբ ԱՄԷ ոլորտային ընկերությունների կողմից հանդիպումներ են նախաձեռնվել, մասնավորապես՝ հանդիպում է եղել «Etihad Water and Energy» ընկերության գործադիր տնօրեն Յուսեֆ Ալ Ալիի հետ՝ քննարկվել են կուտակիչ կայանների կառուցման առաջարկները:

Հանդիպում է կայացել «Etihad Rail» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Շադի Մալաքի հետ՝ քննարկելու երկաթուղային շինարարության ոլորտում հնարավոր համագործակցության հարցեր:

Հանդիպում է տեղի ունեցել «Mohamed bin Zayed Water Initiative» հիմնադրամի գործադիր տնօրեն Այեշա Ալ Աթիկիի հետ՝ քննարկվել են հիմնադրամի կողմից աշխարհի տարբեր երկրներում ջրի սակավության խնդիրների դեմ պայքարի մեթոդները, նախաձեռնությունները: Երկուստեք պատրաստակամություն ենք հայտնել շարունակել երկխոսությունը՝ առավել գործնական հարթությունում համագործակցելու ուղղությամբ:

Ելույթ եմ ունեցել «Building Connected Nations: The Role of Transport and Infrastructure in Sustainable Development» խորագրով պանելային քննարկմանը՝ փաստելով, որ լինելով դեպի ծով ելք չունեցող երկիր, Հայաստանի համար ռազմավարական կարևորություն ունի տրանսպորտային և ճանապարհային ցանցի արդիականացումը: Ներկայացրել եմ ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Այցի արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Պայմանավորվել ենք հետևողականորեն աշխատել վերը նշված ենթակառուցվածքային ուղղություններով համագործակցությունը խորացնելու ուղղությամբ:

10. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման
Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 17.09.2025թ.826-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Դավիթ Խուդաթյան, ՀՀ ՏԿԵ նախարար
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը Արաբական Միացյալ Էմիրություններ /Աբու Դաբի/
5. Գործուղման ժամկետները 29.09-02.10.2025թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հրավիրող կողմի հաշվին

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)
□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը			Ընդամենը
Ճանապարհա ծախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0	0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	0
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	*0*	*0*
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0	
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	*0*	*0*
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր դիվանագիտական սրահից օգտվելու վճար	0	0
Ընդամենը ծախսեր		*0*	*0*

10.10.2024թ.
Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան